# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ՀՈՂՄԻԿԻ ՀԱՄԱՅՆՔ

" 23" դեկտեմբերի 2013թ. գ. Հողմիկ

ՀՀ Շիրակի մարզպետ
պարոն Ֆ. Ցոլակյան

Հարգելի պարոն Ցոլակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հողմիկ համայնքի ավագանու 201 3 թվականի դեկտեմբերի 16-ի նիստի թիվ 12-Ա, 13-Ա, 14-Ա, 15-Ն, 16-Ն որոշումները:

Հարգանքով՝ Ա. Կյուրեղյան

ՀՈՂՄԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ՊՈՍՏ 77 ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՐ 00900572

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մտից թիվ 10612-13
24. 12 13

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՂՄԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## ՈՐՈՇՈՒՄ N 12-Ա

<< 16 >> դեկտեմբերի 2013 թվական գյուղ Հողմիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՂՄԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հողմիկ համայնքի ավագանին

**որոշում է՝**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հողմիկի համայնքի սեփականության 2013 թվականի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

Կողմ՝ 5 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ՎԱՐԴԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ՝ կողմ .....

ՍԵՅՐԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ՝ կողմ .....

ԲԱԲԿԵՆ ԵՐԱՆՈՍՅԱՆ՝ կողմ .....

ԴԱՎԻԹ ՀԱԿՈԲՅԱՆ՝ կողմ .....

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԶԱՔԱՐՅԱՆ՝ կողմ .....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Կյուրեղյան

<< 16 >> դեկտեմբերի 2013 թվական
գ. Հողմիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Հողմիկի համայնքի
ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 16-ի
թիվ 12-Ա որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՂՄԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| N | Գույքի անվանումը | Չափի միավոր | Քանակ | Միավորի արժեքը /հազար դրամ/ | Հաշվեկշռային ընդհանուր արժեքը /հազար դրամ/ | Գույքի տեխնիկական վիճակի նկարագրությունը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տրակտոր ԴՏ (անսարք) | հատ | 1 | 178.0 | 178.0 | բարվոք |
| 2 | Տրակտոր Տ-70 (անսարք) | հատ | 1 | 236.3 | 236.3 | բարվոք |
| 3 | Տրակտոր Տ-16 (անսարք) | հատ | 1 | 105.1 | 105.1 | բարվոք |
| 4 | Տրակտոր Տ-40 (անսարք) | հատ | 1 | 147.4 | 147.4 | ենթակա է նորոգման |
| 5 | Ավտոմեքենա ԳԱԶ- 83 (անսարք) | հատ | 3 | 151.1 | 453.3 | բարվոք |
| 6 | Ավտոբուս ՊԱԶ 214 (անսարք) | հատ | 1 | 219.0 | 219.0 | |
| 7 | Կուլտիվատոր ԿՊՍ-4 | հատ | 2 | 8.95 | 17.9 | |
| 8 | Գութան ՊԼՆ-4 35 (անսարք) | հատ | 2 | 4.9 | 9.8 | |
| 9 | Կցասայլ 2 ՊՏՍ 4(անսարք) | հատ | 2 | 17.4 | 34.8 | |
| 10 | Կարտոֆիլացան (անսարք) | հատ | 1 | 39.3 | 39.3 | |
| 11 | Գոմաղբի ցրիչ ԿՏՍ 10 (անսարք) | հատ | 1 | 13.8 | 13.8 | |
| 12 | Ցիստեռն 5տ | հատ | 1 | | | |
| 13 | Ցիստեռն 9տ | հատ | 1 | | | |
| 14 | Ցիստեռն 10տ | հատ | 1 | | | |
| 15 | Ցիստեռն 25տ | հատ | 1 | | | |
| 16 | Ցիստեռն 10տ | հատ | 1 | | | |
| 17 | Ցիստեռն 10տ | հատ | 1 | | | |
| 18 | Ցիստեռն 5տ | հատ | 1 | | | |
| 19 | ՎԻՄ ՍՍ4 | հատ | 1 | | | |
| 20 | Գյուղամիջյան ճանապարհներ 6.2 կմ | հատ | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 21 | Համայնքապատկան բնակելի տուն | հատ | 23 | | | |
| 22 | Էլ. աղաց (կիսակառույց) | հատ | | | | |
| 23 | Կենցաղի տուն | հատ | | | | |
| 24 | Կուլտուրայի տուն, գրասենյակ | հատ | | | | |
| 25 | Խմելու ջրագծի ներքին ցանց | հատ | | | | |
| 26 | Գրքեր | հատ | 7210 | | | |
| 27 | Համակարգիչ | հատ | 1 | 370.0 | 370.0 | |

ՀՈՂՄԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԿՅՈՒՐԵՂՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՂՄԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Հողմիկի համայնք, հեռախոս 093-62-58-05

## ՈՐՈՇՈՒՄ

« 16 » դեկտեմբերի 2013 թվականի թիվ 13-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՂՄԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 12 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, համայնքի ավագանին

**որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հողմիկի համայնքի ղեկավարի 2014 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 39.89 %-ի չափով՝ 132275 (մեկ հարյուր երեսուներկու հազար երկու հարյուր յոթանասունհինգ) դրամ:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հողմիկի համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հողմիկի համայնքի ղեկավարի 2013 թվականի վարձատրության չափը սահմանելու մասին» թիվ 12 որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

ՎԱՐԴԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ՝ կողմ .....

ՍԵՅՐԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ՝ կողմ .....

ԲԱԲԿԵՆ ԵՐԱՆՈՍՅԱՆ՝ կողմ .....

ԴԱՎԻԹ ՀԱԿՈԲՅԱՆ՝ կողմ .....

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԶԱՔԱՐՅԱՆ՝ կողմ .....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Կյուրեղյան

<< 16 >> դեկտեմբերի 2013 թվական
գ. Հողմիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՂՄԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Հողմիկի համայնք, հեռախոս 093-62-58-05

## ՈՐՈՇՈՒՄ

« 16 » դեկտեմբերի 2013 թվականի թիվ 14-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՂՄԻԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 13 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 31-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի «բ» ենթակետի դրույթները և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 55-Ա հրամանը, համայնքի ավագանին

**որոշում է**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հողմիկի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը՝ 5 :
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հողմիկի գյուղապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հողմիկի համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հողմիկի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2013 թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 13 որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

ՎԱՐԴԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ՝ կողմ .....

ՍԵՅՐԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ՝ կողմ .....

ԲԱԲԿԵՆ ԵՐԱՆՈՍՅԱՆ՝ կողմ .....

ԴԱՎԻԹ ՀԱԿՈԲՅԱՆ՝ կողմ .....

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԶԱՔԱՐՅԱՆ՝ կողմ .....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Կյուրեղյան

<< 16 >> դեկտեմբերի 2013 թվական
գ. Հողմիկ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Հողմիկի համայնքի ավագանու 2013 թվականի
դեկտեմբերի 16-ի թիվ 15-Ա որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՂՄԻԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքի քանակը | Պաշտոնային դրույքաչափը (դրամ) | Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%) | Սահմանված դրույքը | Սահմանված դրույքաչափը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| Համայնքային ծառայության պաշտոններ | | | | | | |
| 1 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 87301 | 65.99 | 1 | 87301 |
| 2 | Գլխավոր մասնագետ-հաշվապահ | 1 | 84606 | 63.96 | 1 | 84606 |
| Տեխնիկական սպասարկման անձնակազմ | | | | | | |
| 3 | Հարկային գործակալ | 1 | 59524 | 45.00 | 1 | 59524 |
| 4 | Գրադարանավար | 1 | 59524 | 45.00 | 1 | 59524 |
| 5 | Հավաքարար | 1 | 59524 | 45.00 | 1 | 59524 |
| Ընդամենը | | 5 | 290955 | - | 5 | 350479 |

ՀՈՂՄԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԿՅՈՒՐԵՂՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՂՄԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Հողմիկի համայնք, հեռախոս 093-62-58-05

## ՈՐՈՇՈՒՄ

« 16 » դեկտեմբերի 2013 թվականի թիվ 15-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՂՄԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի ԹԻՎ 3-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, համայնքի ավագանին

**որոշում է**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հողմիկ համայնքի վարչական տարածքում 2014 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հողմիկի համայնքի ավագանու 2013 թվականի հունվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրաձորի համայնքի վարչական տարածքում 2013 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 3-Ն որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

| | | |
|---|---|---|
| ՎԱՐԴԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ | կողմ | ..... |
| ՍԵՅՐԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ՝ | կողմ | ..... |
| ԲԱԲԿԵՆ ԵՐԱՆՈՍՅԱՆ՝ | կողմ | ..... |
| ԴԱՎԻԹ ՀԱԿՈԲՅԱՆ՝ | կողմ | ..... |
| ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՋԱՔԱՐՅԱՆ՝ | կողմ | ..... |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Կյուրեղյան

<< 16 >> դեկտեմբերի 2013 թվական
գ. Հողմիկ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Հողմիկի համայնքի ավագանու
2013 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 15 -Ն որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՂՄԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) հիմնական օբյեկտների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ երեք հազար (3000)դրամ.

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝վեց հազար (6000) դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնութ հազար (18000)դրամ,

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսանվեց (26000) հազար դրամ,

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երեսուն հազար դրամ.

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ութ հարյուր (800) դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար չորս հարյուր (1400)դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն

չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ յոթ հարյուր (700)դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, սակայն, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մեկ հազար չորս հարյուր (1400) դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ տասնհինգ հազար (15000) դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ տասնյոթ հազար (17000)դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար երկու (200) հարյուր դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընդ ացիկ ուսրվա համար սահմանվում է մեկ հարյուր ութսուն հազար (180000) դրամ.

Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հազար դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հիսուն հազար (50000)դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ հինգ հազար (5000)դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ յոթ հարյուր (700) դրամ.

6. Ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար գանձվում է տուրք հետևյալ դրույքաչափերով՝

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ երկու հարյուր (200) դրամ

2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ երկու հազար հինգ հարյուր (2500)դրամ

3) մեկ շաբաթվա համար՝ չորս հազար հինգ հրյուր (4500)դրամ

4) մեկ ամսվա համար՝ քսաներեք հազար(23000) դրամ

5) մեկ տարվա համար՝ ինսունհինգ հազար (95000) դրամ

7. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ հիսուն հազար (50000)դրամ:

8. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ քառասունյոթ հազար դրամ (47000)դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ ինսունհինգ հազար դրամ (95000)դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ երեք հարյուր հազար (300000) դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ յոթ հարյուր հազար (700000)դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ չորս հարյուր հազար (400000)դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր քսան հազար (120000)դրամ:

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար հինգ (1500)դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար (3000)դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար (1000)դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր (700)դրամ:

10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ ստանալու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է ութ հազար (8000)դրամ:

11. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիլմերում, ասպանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է ինսունհինգ հազար(95000) դրամ:

12. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է ինը հազար (9000)դրամ:

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ տաս հազար (10000)դրամ:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու տեղեկատվության անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ քառասուն հազար (40000)դրամ:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել՝ մեկ հազար (1000) դրամ:

4. Աղբահանության վճարը սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման տվյալներով ըստ հասցեի հաշվառում ունեցող եւ (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ տարեկան երեք հարյուր հիսուն(350) դրամ, կամ

բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսան (20) դրամ.

2) ոչ կենցաղային եւ խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար երկու հազար դրամ,(2000) կամ

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ ութ հազար (8000)դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՂՄԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## ՈՐՈՇՈՒՄ N 16-Ն

<< 16 >> դեկտեմբերի 2013 թվական գյուղ Հողմիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՂՄԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հողմիկի համայնքի ավագանին

**որոշում է՝**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հողմիկ համայնքի 2014 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 5 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ՎԱՐԴԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ՝ կողմ .....

ՍԵՅՐԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ՝ կողմ .....

ԲԱԲԿԵՆ ԵՐԱՆՈՍՅԱՆ՝ կողմ .....

ԴԱՎԻԹ ՀԱԿՈԲՅԱՆ՝ կողմ .....

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԶԱՔԱՐՅԱՆ՝ կողմ .....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Կյուրեղյան

<< 16 >> դեկտեմբերի 2013 թվական
գ. Հողմիկ

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ * ՀՈՂՄԻԿ * ՇԻՐԱԿ * ՀՀ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Հողմիկի համայնքի
ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 16-ի
թիվ 18-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՂՄԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

## ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

| Հ/հ | Եկամուտներ | Հոդվածի համարը | Ընդամենը /հազար դրամ/ | Վարչական մաս /հազար դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1000 | Ընդամենը եկամուտներ | - | 9261.6 | 9261.6 |
| 1100 | Հարկեր և տուրքեր | 7100 | 2533.8 | 2533.8 |
| 1110 | Գույքային հարկեր անշարժ գույքից | 1731 | 1658.6 | 1658.6 |
| 1112 | Հողի հարկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողի համար | | 1658.6 | 1658.6 |
| 1120 | Գույքային հարկեր այլ գույքից | 7136 | 875.2 | 875.2 |
| 1121 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | | 875.2 | 875.2 |
| 1130 | Տեղական տուրք | 7145 | | |
| 1250 | Դոտացիա | 7331 | 6687.8 | 6687.8 |
| 1330 | Գույքի վարձակալության եկամուտներ, այդ թվում՝ համայնքի սեփականություն համարվող հողի վարձավճար | 7415 | 40.0 | 40.0 |

## ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ, ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

| Հ/հ | Ծախսի նվանումները | Հոդվածի համարը | Ընդամենը /հազար դրամ/ | Կարչական մաս /հազար դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| **4000** | **Ընդամենը ծախսեր** | | **9261.6** | 9261.6 |
| **4050** | **Ընթացիկ ծախսեր** | | **9261.6** | 9261.6 |
| **4100** | **Աշխատանքի վարձատրություն, այդ թվում՝** | | **6370.0** | 6370.0 |
| 4111 | Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 5900.0 | 5900.0 |
| 4112 | Պարգևատրում | 4112 | 470.0 | 470.0 |
| **4200** | **Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում** | | **1470.0** | 1470.0 |
| **4210** | **Շարունակական ծախսեր, այդ թվում՝** | | **240.0** | 240.0 |
| 4212 | Էներգետիկ ծառայություններ | 4212 | 140.0 | 140.0 |
| 4214 | Կապի ծառայություններ | 4214 | 100.0 | 100.0 |
| 4220 | Գործուղումների և շրջագայությունների ծախսեր | | 150.0 | 150.0 |
| 4221 | Ներքին գործուղումներ | 4221 | 150.0 | 150.0 |
| **4230** | **Պայմանագրային այլ ծառայություններ** | | **280.0** | 280.0 |
| 4232 | Համակարգչային ծառայություններ | 4232 | 100.0 | 100.0 |
| 4234 | Տեղեկատվական ծառայություններ | 4234 | 80.0 | 80.0 |
| 4241 | Մասնագիտական ծառայություն | 4241 | 100.0 | 100.0 |
| **4260** | **Նյութեր** | | **950.0** | 950.0 |
| 4261 | Գրասենյակային նյութեր և հագուստներ | 4261 | 150.0 | 150.0 |
| 4264 | Տրանսպորտային նյութեր | 4264 | 400.0 | 400.0 |
| 4268 | Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 400.0 | 400.0 |
| **4600** | **Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ** | | **700.0** | 700.0 |
| 4634 | Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 700.0 | 700.0 |
| **4700** | **Այլ ծախսեր, այդ թվում՝** | | **721.6** | 721.6 |
| 4819 | Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններից | 4819 | 15.0 | 15.0 |
| 4723 | Պարտադիր վճարներ | 4823 | 45.6 | 45.6 |
| 4771 | Պահուստային միջոցներ | 4891 | 661.0 | 661.0 |

ՀՈՂՄԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԿՅՈՒՐԵՂՅԱՆ

ՀՈՂՄԻԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ